ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան 2017

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զինծառայողների սոցիալական ապահովությունը ՀՀ զինված ուժերում զինվորական կառավարման բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրականացվող համաձայնեցված, նպատակաուղղված, կազմակերպչական և իրավական միջոցառումների համակարգ է՝ ուղղված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալ-իրավական իրավունքների և երաշխիքների իրականացմանը:

Ռազմական շինարարության միջազգային և հայրենական փորձը վկայում է, որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը եղել և մնում է զինված ուժերին առաջադրված խնդիրները հաջողությամբ լուծելու գերակայությունը պայմանավորող առաջնային գործոններից մեկը: Գերակայում է այն թեզը, որ միայն սոցիալապես ապահովված, կրթական-մասնագիտական բարձր որակներ ունեցող, որպես լավ ծառայության արդյունք՝ ծառայության մեջ առաջխաղացման հեռանկարներով շահագրգռված, իսկ վիրավորվելու կամ զոհվելու պարագայում պետության խնամակալությանը վստահ զինծառայողը կարող է լինել կարգապահ, հոգեբանորեն կայուն և մարտունակ:

Զինծառայողների, զինծառայողներին հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների համար օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքներին վերաբերող հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողի կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին», «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք», «ՀՀ զինված ուժերի ներքին ծառա-

յության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այդ անձանց կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության երաշխիքներ սահմանող իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներով և իրավական ակտերով:

Վերջին տարիներին զգալի փոփոխություններ են կատարվել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում: Կատարված փոփոխությունները հիմնականում կրել են ոլորտում առկա խնդիրները կանոնակարգող և հստակեցնող բնույթ, բարելավվել են սոցիալական երաշխիքները:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործող օրենսդրության համաձայն՝

1. Զինծառայող են համարվում ՀՀ պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների (այսուհետև՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

2. Զինծառայողներին հավասարեցված անձինք (օրենքով սահմանված որոշակի վերապահումների և առանձնահատկությունների հաշվառմամբ) են համարվում՝

1) վարժական հավաքների կանչված զինապարտները,

2) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները, այդ թվում՝ երկրապահ կամավորականները,

3) ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողները և հարկադիր կատարողները,

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայողները,

5) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառա-

յությունում և ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք:

3. Զինծառայողների, այդ թվում՝ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամ (օրենքով սահմանված որոշակի վերապահումների և առանձնահատկությունների հաշվառմամբ) են համարվում՝

1) 18 տարին չլրացած երեխաները, անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը,

2) ծնողները, ամուսինը (կինը),

3) զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

4) Օրենքով սահմանված սոցիալական երաշխիքները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ առաջացած հիվանդությունը,

բ) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների վրա: («Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

Պետական մարմինների և գործատուների պարտավորությունները զինծառայողների սոցիալական ապահովության բնագավառում

Համապատասխան մարմինների սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումները, ինչպես նաև բոլոր կարգի գործատուները, զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ու նրանց ընտանիքների անդամների պահանջով, պարտավոր են նրանց ապահովել սույն օրենքով սահմանվող սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերով, որոնց ցանկը, տրամադրելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված):

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են հետևյալ իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները

1. Կենսաթոշակային ապահովության երաշխիքը:
2. Սոցիալական պաշտպանության երաշխիքները, այդ թվում՝

I. զինծառայողների աշխատանքային երաշխիքը,

II. զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը,

III. զինծառայողներին արձակուրդ տալը,

IV. նյութական ապահովության երաշխիքները, որոնք ներառում են՝

– դրամական ապահովության երաշխիքը,

– պարենային և իրային ապահովությունը,

– դրամական օգնությունները, փոխհատուցումները,

– բնակարանային ապահովությունը,

– պարգևավճարների իրավունքը,

– ժամկետային զինծառայողների և մարտական գործողությունների մասնակիցների լրացուցիչ երաշխիքները,

– տրանսպորտային սպասարկումը,

– պարտադիր պետական ապահովագրությունը,

– զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության և գերեզմանների բարեկարգման ծախսերի փոխհատուցումը:

3. Բժշկական սպասարկումը:

4. Զինծառայողի կրթություն ստանալու երաշխիքը:

5. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում ստանալու իրավունքը:

6. Գույքահարկի գծով արտոնությունները:

7. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ և արտոնություններ:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության երաշխիքը

Օրենքով սահմանված են երկարամյա ծառայության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նշանակվող զինվորական կենսաթոշակներ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակվում է համապատասխան մարմիններում, ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին, որը՝

1) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ,

2) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս,

3) հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

Զինծառայողին կենսաթոշակ է նշանակվում զինծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Նշված օրենքով սահմանված կարգով և պայմաններում զինծառայողներին նշանակվում են նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, իսկ նրանց զոհվելու (մահանալու) դեպքերում՝ կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքների անդամներին նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ և ամենամսյա պարգևավճար:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե իրավասու պետական մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ 5 տարվա ընթացքում, սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ: Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է անկախ զինվորական ծառայության տևողությունից:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված կենսաթոշակի իրավունք:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անդամներին՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառից, անցած ժամանակաշրջանից և ծառայության տևողությունից:

Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև՝

1) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողի ընտանիքի անդամների վրա, որի մահվան պատճառը զինծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ ծագած հիվանդությունը,

2) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամների վրա:

Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում նաև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և զինծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողի ընտանիքի անդամներին:

Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված կենսաթոշակի իրավունք:

Զինծառայողների աշխատանքային երաշխիքները

1. Զինծառայողները, բացառությամբ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվողների, չեն կարող ծառայությունից արձակվել մինչև երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը՝ բացի այն դեպքերից, երբ ծառայությունը դադարեցվում է.

1) նրանց անձնական ցանկությամբ,

2) առողջական վիճակի բերմամբ,

3) հաստիքների կամ զինված ուժերի թվակազմը կրճատելու պատճառով,

4) պայմանագրի ժամկետը ավարտվելու կամ պայմանագրի պայմանները չկատարելու կապակցությամբ,

5) զինվորական կանոնագրքերի պահանջների պարբերական խախտումների պատճառով,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող բոլոր գործատուները պարտավոր են մինչև զորակոչվելն իրենց մոտ աշխատած ժամկետային զինծառայողներին զինված ուժերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, ընդունել աշխատանքի՝ նախկինից ոչ ցածր պաշտոնով:

3. Աշխատողների թվակազմի կամ հաստիքների կրճատման ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում, զինված ուժերի շարքերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, զինծառայողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են աշխատանքում թողնվելու նախապատվության իրավունքից: («Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված):

Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը

Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակի տևողությունն ու բաշխումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության զինվորական կանոնագրքերով և համապատասխան այլ օրենսդրական ակտերով:

Զինավարժությունները, մարտական հրաձգությունները և մարտական հերթապահություններն անցկացվում են շաբաթվա ցանկացած օր՝ առանց աշխատաժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման:

Սպաներին, ենթասպաներին, ինչպես նաև զինծառայող կանանց, ովքեր ծառայողական անհրաժեշտության բերումով զինվորական ծառայության պարտականությունները կատարում են տոնական և ոչ աշխատանքային օրերին, տրամադրվում են հանգստյան այլ օրեր:

Նշված օրերին զինվորական պարտականությունները կատարելու դեպքում ժամկետային զինվորական ծառայության զինծառայողների հանգստի ժամանակը սահմանում է համապատասխան հրամանատարը (պետը):

Զինծառայողների վերակարգերը և հերթապահություններն անցկացվում են զինված ուժերի կանոնագրքերի, կանոնադրությունների և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համաձայն («Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված):

Զինծառայողներին տրվող արձակուրդները

Ժամկետային զինծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում է հերթական տարեկան արձակուրդ: Արձակուրդի տևողությունը կազմում է՝

մինչև 15 տարի ծառայած զինծառայողների համար՝ 30 օր,

15-ից 25 տարի ծառայած զինծառայողների համար՝ 40 օր,

25 և ավելի տարի ծառայած զինծառայողների համար՝ 45 օր,

ժամկետային պարտադիր զինվորական ծառայության սպայական կազմի համար յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

Ծառայության հատուկ պայմաններ ունեցող կամ վնասակար աշխատանքներում զբաղված ժամկետային զինծառայողներին տրվում է լրացուցիչ տարեկան արձակուրդ՝ 10 օր տևողությամբ: Նման արձակուրդի իրավունք տվող ծառայության տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ընտանեկան հանգամանքների բերումով, ուսման կապակցությամբ և այլ հարգելի պատճառներով, հրամանատարի (պետի) որոշմամբ

ժամկետային զինծառայողին կարող է տրվել լրացուցիչ տարեկան արձակուրդ՝ մինչև 10 օր տևողությամբ:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներին զինվորական ծառայության ընթացքում որպես խրախուսանք կարող է տրվել արձակուրդ. զինվորներին՝ 15 օր, սերժանտներին և ավագներին՝ 20 օր տևողությամբ:

Հրամանատարի (պետի) որոշմամբ ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողներին կարող է տրվել մինչև 5 օր տևողությամբ լրացուցիչ արձակուրդ՝ ելնելով զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշներից, իսկ ամուսնացածներին՝ ևս 5 օր՝ վեց ամիսը մեկ անգամ:

Զինծառայողի կնոջը (ամուսնուն) իր ցանկությամբ տարեկան արձակուրդ կարող է տրվել ամուսնու (կնոջ) արձակուրդի հետ միաժամանակ:

Զինծառայողի՝ հանգստյան տներից օգտվելու իրավունքը

Զինծառայողը արձակուրդը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հանգստյան տներում անցկացնելու դեպքում օգտվում են ուղեգրի գնի փոխհատուցման իրավունքից: Ուղեգրի գնի փոխհատուցման կարգը և չափերը սահմանված է ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի №778 որոշման 18.1 կետով, ըստ որի զինծառայողին հանգստյան տան ուղեգիրը տրամադրվում է անվճար, իսկ զինծառայողի ընտանիքի անդամներին՝ հանգստյան տան ուղեգրի արժեքի 50 տոկոսի չափով:

ՊՆ համակարգում հանգստի և առողջարանային բուժման ծառայություններ իրականացնում է «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանը՝

ա) զինծառայողներին անվճար,

բ) ընտանիքի անդամներին՝ ուղեգրի արժեքի 50 % զեղչով:

(«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված):

Զինծառայողների դրամական ապահովության երաշխիքը

Գործող օրենսդրության համաձայն՝ զինծառայողների դրամական ապահովությունը դիտվում է որպես զինծառայողների նյութական ապահովության և նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարումը խթանելու հիմնական միջոց: Զինծառայողների վարձատրությունն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին և պայմաններին համապատասխան: Զինծառայողի դրամական ապահովությունը ներառում է զինվորական կոչումներին համապատասխանող զինվորական պաշտոնների դասակարգման խմբերին և զինվորական ծառայության ստաժներին համարժեք պաշտոնային դրույքաչափեր, օրենքով սահմանված կարգով տրվող հավելումներ և հավելավճարներ, սահմանված է զինծառայողների զինվորական ծառայության ստաժի համար պաշտոնային դրույքաչափի բնականոն աճն ապահովող սանդղակ և գործակիցներ:

Ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ զինծառայողներին վճարվում են նաև հավելումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» №712-Ն որոշմամբ սահմանված կարգով, ընդ որում՝ հավելումները և հավելավճարները դրամական ապահովության փոփոխական մասերն են, որոնք հաշվարկվում են պաշտոնային դրույքաչափի նկատմամբ խաղաղ ժամանակ կյանքի համար և առողջությանը վտանգ ներկայացնող պայմանների, ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար, աշխարհագրական և այլ հատուկ միջավայրի, պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվելու, ինչպես նաև հրամանատարության և ղեկավարելու, կարգայնության, ուսումնառություն անցնելու, օտարերկրյա պետություններում ծառայության կամ առաքելությունների մասնակցության և այլ առանձնահատուկ պայմանների համար:

Բացի այդ, ծառայողական գործունեության գնահատման և (կամ) հատուկ առաջադրանքների և (կամ) աշխատանքների որակյալ կատարման համար զինծառայողներին կարող են տրվել պարգևատրումներ՝ օրենքով սահմանված կարգով:

Զինծառայողների պարենային և իրային ապահովությունը

Զինծառայողները ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են ստանալ պարենային և իրային ապահովություն՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Պարենային և իրային ապահովության կարգը ներառում է սննդով և իրային միջոցներով ապահովման ենթակա անձնակազմի շրջանակը, հատկացվող սննդի տեսականին ու դրանց օրական չափաբաժինները, ինչպես նաև իրային միջոցների ցանկը: Կառավարության սահմանած դեպքերում իրային ապահովությունը կարող է փոխարինվել դրամական փոխհատուցմամբ: Սննդի ու իրային միջոցների հատկացման կարգը սահմանվում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Դրամական օգնությունները և փոխհատուցման գումարները

Ծառայությունից արձակման դրամական օգնություն

Երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կամ զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը կամ պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի №1119-Ն սահմանած կարգով և չափերով զինծառայողներին տրվում է դրամական օգնություն՝

1) 3 տարուց մինչև 10 տարի զինվորական ծառայության համար,
2) 10 տարուց մինչև 15 տարի զինվորական ծառայության համար,
3) 15 տարուց մինչև 20 տարի զինվորական ծառայության համար,
4) 20 տարուց մինչև 25 տարի զինվորական ծառայության համար,

5) 25 և ավելի տարի զինվորական ծառայության համար:

Մինչև 3 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող և առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կապակցությամբ պայմանագրային զինծառայողներին, ինչպես նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմին օրենքով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվում է դրամական օգնություն՝ վերջին զբաղեցրած զինվորական ծառայության պաշտոնի պաշտոնային դրույքաչափի չափով:

Պայմանագրի ժամկետը լրացող և զինվորական ծառայությունը շարունակելու համար նոր պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած զինծառայողին իր ցանկությամբ տրվում է օրենքով սահմանված կարգով դրամական օգնություն ստանալու հնարավորություն՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան սահմանված չափով: Ընդ որում, սահմանված դրամական օգնությունը համապատասխան ստաժի շրջանակներում տրվում է մեկ անգամ:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ, ինչպես նաև առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ ընտանեկան պայմաններից ելնելով, ժամկետից շուտ զինվորական ծառայությունից արձակվելիս շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր ժամկետային զինծառայողներին տրվող դրամական օգնության չափը՝ ***10.000 դրամ (տասը հազար դրամ),*** իսկ նույն կազմերից այն զինծառայողին, ում ծնողները (այդ թվում՝ միայնակ մոր կամ միայնակ հոր կարգավիճակ ունեցող ծնողը) մահացած են՝ ***200.000 դրամ (երկու հարյուր հազար դրամ***):

Պաշտոնային դրույքաչափի չափով միանվագ դրամական օգնություն

ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի №1119-Ն որոշման 9-րդ Հավելվածով սահմանված կարգով և պայմաններում զինծառայողներին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի

զինծառայողների) տարվա ընթացքում մեկ անգամ տրվում է դրամական օգնություն պաշտոնային դրույքաչափի չափով՝

- զինծառայողի ամուսնության,
- տարերային աղետի հետևանքով զինծառայողին սեփականության իրավունքով պատկանող գույքին վնաս պատճառվելու,
- զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության,
- զինծառայողի ընտանիքի անդամի մահվան դեպքերում:

Զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, զավակները և համատեղ բնակվող ծնողները, իսկ ծառայողական բնակելի տարածությունում բնակվող կամ բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցում ստացող զինծառայողի դեպքում՝ նաև այլ վայրում բնակվող ծնողները:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին վերը նշված դեպքերում տարեկան մեկ անգամ տրամադրվող միանվագ դրամական օգնության չափը կազմում է ***100.000 դրամ***:

Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում դրամական օգնություն

Զինծառայողին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների), ինչպես նաև նրա հետ տեղափոխվող ընտանիքի յուրաքանչյուր անդամին տարվա ընթացքում մեկ անգամ ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի №1119-Ն որոշման 8-րդ Հավելվածի 5-րդ կետի համաձայն տրվում է դրամական օգնություն՝

- նախկին և նոր ծառայության վայրերի միջև 50 կիլոմետրից մինչև 100 կիլոմետր հեռավորության դեպքում՝ ***25.000 դրամ,***
- նախկին և նոր ծառայության վայրերի միջև 100 և ավելի կիլոմետր հեռավորության դեպքում՝ ***50.000 դրամ***,
- զինծառայողի հետ տեղափոխվող ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ ***12.000 դրամ:***

Չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցում

Զինվորական ծառայությունից արձակվող և ոչ ավելի, քան երկու տարվա (զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող տարում) հերթական արձակուրդից չօգտված (կամ մասամբ օգտված) զինծառայողներն օգտվում են չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից: Դրամական փոխհատուցման չափը հաշվարկվում է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի №778 որոշման 15.1 կետով սահմանված կարգով՝ զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի խմբին համապատասխան սահմանված պաշտոնային դրույքաչափը 30-ի բաժանելու և չօգտագործված արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով:

Զինծառայողների բնակարանային ապահովությունը

Գործող օրենսդրության համաձայն՝ զինծառայողները, առողջության, տարիքի կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողները, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ, ինչպես նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողները և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական աջակցություն:

Բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական աջակցություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 2007թ. մարտի 7-ի «ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» №384-Ն և ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի «Անհատույց պետական աջակցություն տրամադրելու մասին» №947-Ն որոշումներով:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող այն բնակարանները, որոնք անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել են բնակելի տարածության կարիքավոր զինծառայողներին, սեփականության իրավունքով վերջիններիս տրամադրվում են ՀՀ կառավարության 2007թ. մարտի 7-ի «ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» № 384-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններում:

Վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում

Ծառայության անցկացման վայրից 30 և ավելի կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակմակերես չունեցող զինծառայողներն օրենքով սահմանված կարգով ապահովվում են ծառայողական բնակարաններով, իսկ դրանց բացակայության դեպքում, վարձակալված բնակարանի դիմաց նրանց վճարվում է դրամական փոխհատուցում՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին №778 որոշմամբ հաստատված՝ «Զինծառայողների և քաղաքացիական ծառայողների կողմից բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցման վճարման» կարգի համաձայն:

Բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցումը վճարվում է յուրաքանչյուր ամիս՝ հետևյալ չափերով՝

– Երևան քաղաքում՝ մինչև 4 անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ ***42.000 դրամ***, 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ ***63.000 դրամ,***

– այլ քաղաքներում՝ մինչև 4 անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ ***22.000 դրամ***, 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ ***33.000 դրամ,***

– այլ բնակավայրերում՝ մինչև 4 անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ ***15.000 դրամ***, 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ ***22.500 դրամ:***

Բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն

ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի «Անհատույց պետական աջակցություն տրամադրելու մասին» №947-Ն որոշմամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակարանի կարիքավորների հերթացուցակում ընդգրկված հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներին, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին բնակարան ձեռք բերելու համար տրամադրվում է բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ հիմք ընդունելով ֆինանսական աջակցություն տրամադրելու պահին նախորդող եռամսյակի դրությամբ տվյալ բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների ձևավորված շուկայական միջինացված արժեքի մասին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրած գները:

Ամենամսյա պարգևավճարի իրավունք

Օրենքով սահմանված ամենամսյա պարգևավճարի չափերը, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը, պարգևավճար նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշմամբ: Նշված իրավական ակտի համաձայն՝ ՀՀ զինված ուժերի նախկին զինծառայողներին վերաբերող մասով, ամենամսյա պարգևավճարի իրավունք ունեն զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող հետևյալ կատեգորիայի անձինք՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձինք՝ հետևյալ չափերով՝

- 1-ին խմբի հաշմանդամը՝ ***55000 դրամ***,
- 2-րդ խմբի հաշմանդամը՝ ***48000 դրամ***,
- 3-րդ խմբի հաշմանդամը՝ ***36000 դրամ:***

Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք՝ հետևյալ չափերով՝

- 1-ին խմբի հաշմանդամը՝ ***19000 դրամ,***

- 2-րդ խմբի հաշմանդամը՝ ***17000 դրամ,***

- 3-րդ խմբի հաշմանդամը՝ ***15000 դրամ:***

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները՝ ամսական ***5000 դրամ:***

3) Հայաստանի Հանրապետության Ազգային հերոսները՝ ամսական՝ ***150.000 դրամ:***

4) «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված զինծառայողները՝ ամսական ***15.000 դրամ:***

5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները՝

- յուրաքանչյուր երեխան՝ ***16.000 դրամ,***

- յուրաքանչյուր այլ անդամ՝ ***13.000 դրամ:***

6) տարիքային աշխատանքային կենսաթոշակ կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստացող և կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող, սակայն զինվորական կենսաթոշակ չստացող՝ մահացած զինծառայողների ընտանիքի անդամները՝

- յուրաքանչյուր երեխան՝ ***38.000***,

- յուրաքանչյուր այլ անդամ՝ ***31.000:***

7) տարիքային աշխատանքային կենսաթոշակ կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստացող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված, Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիքի անդամները (անկախ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունենալու հանգամանքից) հետևյալ չափերով՝

- յուրաքանչյուր երեխան՝ ***38000 դրամ,***

- յուրաքանչյուր այլ անդամ՝ ***31000 դրամ:***

8) Պարգևավճար ստանալու իրավունք ունեն (անկախ ընտանիքում կենսաթոշակառու կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձ (այսուհետ՝ կենսաթոշակառու) լինելու հանգամանքից) զոհված զինծառայողների ընտանիքները՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիքը (ծնողները, ամուսինը, 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև նրա 23 տարին լրանալը), 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում)՝ 30.000 դրամ, որին ավելացվում է զոհված զինծառայողի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող յուրաքանչյուր երեխայի համար՝ լրացուցիչ 20.000 դրամ:

Սույն որոշման դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն որոշման մեջ նշված անձինք ձեռք են բերում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ամենամսյա պարգևավճարի իրավունք:

9) Համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի՝ ՀՀ կառավարության 6 մարտի 2014 թվականի №302-Ն որոշմամբ սահմանված է՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականություն-

ները կատարելիս զոհված, հետմահու «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում ստացած անձի ընտանիքին տրվող ***պարգևավճարի չափը՝ 250.000 դրամ,***

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված, առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքին տրվող ***պարգևավճարի չափը՝ 150.000 դրամ,***

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված, Մարտական խաչ երկրորդ աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքին տրվող ***պարգևավճարի չափը՝ 100.000 դրամ***:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված, հետմահու Հայաստանի Ազգային հերոս Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին ամենամսյա պարգևավճարը 2014 թվականի հունվարի 1-ից հետո նշանակում և վճարում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը՝ իր տարածքային ստորաբաժանումների միջոցով:

Լրացուցիչ երաշխիքներ և արտոնություններ՝ ժամկետային զինծառայողների ու մարտական գործողությունների մասնակիցների համար

Ժամկետային զինծառայողներն ու մարտական գործողությունների մասնակիցները զբաղեցրած բնակելի տարածության նկատմամբ իրենց իրավունքները՝ անկախ բնակարանի սեփականության ձևից և գերատեսչական ենթակայությունից, պահպանում են ծառայության ու մարտական գործողություններին մասնակցելու ընթացքում:

Զինծառայողների տրանսպորտային սպասարկումը

Զինծառայողները Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից:

Զինծառայողներին ծառայողական պարտականությունների կատարման նպատակով այլ բնակավայրեր գործուղելու ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Զինծառայողներն արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս ընտանիքի՝ նրանց ուղեկցող անդամները քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), օգտվում են ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 6-ի թիվ 886-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններում, ըստ որի՝ արձակուրդի վայր մեկնելիս և վերադառնալիս զինծառայողներին և նրանց ուղեկցող ընտանիքների անդամներին՝ ՀՀ տարածքում քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտից (բացի տաքսիից) օգտվելու համար, տարեկան մեկ անգամ տրվում է ծախսերի փոխհատուցում՝

- մինչև 30կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 600 դրամ,
- 30-60 կմ՝ 1000 դրամ,
- 60-100 կմ՝ 1200 դրամ,
-100-150 կմ՝ 2000 դրամ,
- 150-200 կմ՝ 2400 դրամ,
- 200-250կմ՝ 3000 դրամ,
- 250-300 կմ՝ 6000 դրամ,
- 300-350կմ՝ 8000 դրամ,
- 350-կմ և ավելի մեկնելու և վերադառնալու համար՝ 10.000 դրամ:

Զինծառայողին ուղեկցող ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին վճարվում է սահմանված գումարի 50 տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը

2017թ. հունվարի 9-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նպատակը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովող հատուկ համակարգի ներդրումն է:

Օրենքով նախատեսվում է հատուցման գումարներ վճարել այն զինծառայողներին, որոնք զոհվել կամ հաշմանդամություն են ստացել մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ:

Զինծառայողների մահվան դեպքում հատուցման գումարները կվճարվեն իրենց ընտանիքի անդամներին (ծնող, ամուսին, զավակ, զինծառայողի խնամքի տակ գտնվող անձինք (անաշխատունակ տատը, պապը և մինչև 21 տարեկան քույրը, եղբայրը)):

Հատուցման գումարները վճարվում են 2017թ. հունվարի 1-ից հետո տեղի ունեցած հատուցման դեպքերի համար: Հատուցման դեպքը համարվում է տեղի ունեցած, եթե՝

1) զինծառայողը զոհվել (մահացել) է մարտական գործողությունների ժամանակ կամ մարտական գործողությունների ավարտի օրվանից հետո հինգ տարվա ընթացքում՝ մարտական գործողությունների հետևանքով ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով.

2) զինծառայողը մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորելու հետևանքով օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող, և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անցել է վեց ամիս, եթե մինչև հատուցման գումար վճարելու սկիզբը զինծառայողը չի հայտնաբերվել, կամ

3) զինծառայողը մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով ստացել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն:

6. Հատուցման դեպք չի համարվում այն դեպքը, երբ զինծառայողի զոհվելը (մահանալը) կամ հաշմանդամ դառնալը իր կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է:

Հատուցման գումարների չափերը և վճարման պայմանները

1. Հատուցման գումարները վճարվում են հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել 2017 թվականի հունվարի 1-ից հետո՝ հետևյալ նվազագույն չափերով.

1) զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու կամ զինծառայողի 1-ին խմբի հաշմանդամության դեպքում՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողին՝ 82.000.000 դրամ, որից 10.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 300 հազար դրամ ՝ 20 տարվա ընթացքում.

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձին՝ 70.000.000 դրամ, որից 10.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 250 հազար դրամ ՝ 20 տարվա ընթացքում.

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին՝ 58.000.000 դրամ, որից 10.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 200 հազար դրամ ՝ 20 տարվա ընթացքում.

2) առողջությանը պատճառված վնասի հետևանքով զինծառայողի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 53.000.000 դրամ, որից 5.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 200 հազար դրամ ՝ 20 տարվա ընթացքում.

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ կամավորագրված անձի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 41.000.000 դրամ, որից 5.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 150 հազար դրամ ՝ 20 տարվա ընթացքում.

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 29.000.000 դրամ, որից 5.000.000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 100 հազար դրամ ՝ 20 տարվա ընթացքում:

Բոլոր դեպքերում, եթե զինծառայողն ունի 3 կամ ավելի երեխա, ապա ի լրումն վերը նշված գումարների՝ զինծառայողի ընտանիքին յուրաքանչյուր ամիս կվճարվի ևս 100 հազար դրամ:

Հատուցման գումարների վճարումն իրականացնելու և հավաքագրված դրամական միջոցները կառավարելու նպատակով սույն օրենքով ստեղծվում է հատուկ կառույց՝ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամ, որը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է: Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է 9 անդամից: Խորհրդի անդամները նշանակվում (ընտրվում) են հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամներից՝

1) երեքին նշանակում է Կառավարությունը.

2) երեքին նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը.

3) երեքին ընտրում են զինծառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները:

Հիմնադրամի կողմից հատուցումներ վճարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները կձևավորվեն հետևյալ աղբյուրներից՝

- Յուրաքանչյուր աշխատող ֆիզիկական անձի կողմից ամսական 1000 դրամ գումարի չափով վճարվող դրոշմանիշային վճարներից.
- ներգրավված վարկերից, փոխառություններից.

- նվիրատվությունների,նվիրաբերությունների, դրամաշնորհների գումարներից.
- միջոցների ներդրումներից ստացվող եկամուտներից:

Զինծառայողների պարտադիր պետական ապահովագրությունը

Զինծառայողները ենթակա են զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ ***զոհվելու (մահանալու) դեպքերից*** պարտադիր պետական ապահովագրության: Ապահովագրության և ապահովագրական գումարների չափերը, վճարման կարգը և պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի №778 որոշմամբ, ըստ որի՝

ա) ծառայողական պարտականությունները կատարելիս զինծառայողների զոհվելու (մահանալու) դեպքում վճարվում է երկու միլիոն դրամի չափով (2.000.000 դրամ) միանվագ ապահովագրական գումար:

բ) զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների զոհվելու (մահանալու) դեպքում՝ մեկ միլիոն դրամի չափով (1.000.000 դրամ) միանվագ ապահովագրական գումար:

Հաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված ցուցակների հիման վրա միանվագ պետական պարտադիր ապահովագրական գումարներ է հատկացվում՝

ա) առաջին խմբի հաշմանդամներին՝ 500.000 դրամ,

բ) երկրորդ խմբի հաշմանդամներին՝ 400.000 դրամ,

գ) երրորդ խմբի հաշմանդամներին՝ 300.000 դրամ:

Սույն կետի դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի վրա:

Միանվագ պետական պարտադիր ապահովագրական գումարը չի վճարվում, եթե զինծառայողի զոհվելը (մահանալը) կամ հաշմանդամ դառնալը նրա կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է:

Զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը

Զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 18-ի «Վարժական հավաքների և զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը փոխհատուցելու մասին» № 341 որոշման համաձայն, հուղարկավորման ծախսերի փոխհատուցման համար տրամադրվում է ***700.000 դրամ***, իսկ գերեզմանի բարեկարգման, տապանաքարի պատրաստման և տեղադրման ծախսերի փոխհատուցման համար՝ ***1.400.000 դրամ***:

«Եռաբլուր» պանթեոնում և այլ քաղաքների եղբայրական գերեզմանոցներում հուղարկավորված զինծառայողների ընտանիքներին գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար նախատեսված գումարը չի վճարվում:

Կոմունալ ծառայությունների դիմաց զեղչով վճարելու իրավունքը

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքը (ամուսինը, ծնողները, ինչպես նաև ընտանիքի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անդամները) օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

Զինծառայողների անվճար բժշկական սպասարկումը

Զինծառայողները և նրանց ընտանիքի անդամներն ապահովվում են անվճար որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում: Ծառայության անցկացման վայրում նման բժշկական հիմնարկների բացակայության, ինչպես նաև անհետաձգելի դեպքերում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում՝ համապատասխան մարմինների միջոցների հաշվին՝ բուժման ծախսերի հետագա փոխհատուցմամբ, որի կարգը և պայմանները սահմանված են ***ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի №318-Ն և 2013 թվականի հուլիսի 25-ի №806-Ն որոշումներով:***

Նույն կարգով է իրականացվում նաև երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողների և օրենքով սահմանված դեպքերում՝ զինծառայողներին հավասարեցված անձանց, ինչպես նաև ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամների բժշկական օգնությունը և սպասարկումը:

Վերը նշված կարգով և պայմաններով պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության և սպասարկման իրավունքից օգտվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի հետևյալ անդամները՝

1) 18 տարին չլրացած երեխաները, անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը,

2) ծնողները, ամուսինը,

3) զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված, կամ մինչև 23 տարեկան ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամ-

քի տակ գտնվող, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողների և օրենքով սահմանված դեպքերում՝ զինծառայողներին հավասարեցված անձանց, ինչպես նաև ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամների համար պետության կողմից իրականացվող բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է համապատասխան աղյուսակում:

ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի № 806-Ն որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման ծրագրի շրջանակներում զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների համար փոխհատուցման ենթակա չեն.

- ստոմատոլոգիական (ատամնաբուժական) բոլոր տեսակի ծառայությունները,
- սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժումը,
- ուռուցքաբանական հիվանդությունների քիմիաթերապևտիկ բուժումը,
- վերականգնողական բուժօգնությունը,
- մանկաբարձական բուժօգնությունը (ծննդօգնություն և հղիության ախտաբանություն),
- ֆիզիոթերապևտիկ միջոցառումները և բուժումը,
- ռեպրոդուկտիվ (վերարտադրողական) ֆունկցիայի և էրեկտիլ դիսֆունկցիայի (իմպոտենցիա) հետ կապված հետազոտությունները և բուժումը (արհեստական և արտամարմնային բեղմնավորում),
- վերջույթների և դրանց առանձին սեգմենտների պրոթեզավորումը,

- պրոթեզները, էնդոպրոթեզները, իմպլանտները, տեսողական և լսողական սարքերը, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական սարքերը և հարմարանքները,

- և մի շարք այլ բժշկական ծառայություններ (ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի №57-Ն հրամանով հաստատված՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների չափորոշիչում ընդգրկված բժշկական օգնության ու սպասարկման տեսակները):

Ծրագրից դուրս իրականացված ծառայությունների բուժման ծախսերի փոխհատուցում չի իրականացվում:

ՀՀ ՊՆ հոսպիտալային համակարգում զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամներին ցուցաբերվող բուժօգնությունն անվճար է, տվյալ հոսպիտալի ունեցած հնարավորությունների սահմանում՝ ամբողջ ծավալով:

Զինծառայողի ստացած վնասվածքի կամ խեղման կամ ծագած հիվանդության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժման (հետազոտության) անհնարինության դեպքում զինծառայողի բուժումն իրականացվում է օտարերկրյա պետությունում: Հայաստանի Հանրապետությունից դուրս զինծառայողի բուժման, կեցության և ճանապարհածախսի գումարը հատկացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Օտարերկրյա պետությունում բուժման, ճանապարհածախսի և կեցության գումարը պետական միջոցների հաշվին հոգալու իրավունքից օգտվում են մարտական հերթապահություն իրականացնելիս կամ առաջնագծում ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած զինծառայողները, բացառությամբ եթե ստացած վնասվածքը կամ խեղումը կամ դրանց հետևանքով ծագած հիվանդությունը դիտավորությամբ ինքն իրեն վնաս պատճառելու հետևանք է: Այն դեպքերում, երբ զինծառայողի բուժումն օտարերկրյա պետությունում կազմակերպելու համար անհրաժեշտ է ուղեկցող անձի ներկայություն, հատուցվում են նաև ուղեկցող անձի ճանապարհածախսը և կեցությունն օտարերկրյա պետությունում:

Զինծառայողների անվճար առողջարանային բուժման իրավունքը

Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք: Զինծառայողների առողջարանային բուժման անհրաժեշտության մասին եզրակացությունը ՀՀ կառավարության 20.06.2001թ. թիվ 553 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն տրվում է ՊՆ բժշկական ծառայության համապատասխան բուժհաստատության (պոլիկլինիկայի) կողմից, իսկ 4-րդ կետի համաձայն՝ առողջարանային բուժման ուղեգիրը զինծառայողներին հատկացվում է ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական ծառայության (ռազմաբժշկական վարչության) կողմից:

Զինծառայողների կրթություն ստանալու երաշխիքը

Զինծառայողներն իրավունք ունեն սովորելու ռազմաուսումնական հաստատություններում, իսկ սպաներն ու ենթասպաները՝ նաև այլ ուսումնական հաստատություններում՝ ինչպես հիմնական կրթություն ստանալու, այնպես էլ վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակներով:

Պետությունը երաշխավորում է՝

1) ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին,

2) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ մրցույթից դուրս՝ պետական պատվերի շրջանակներում, ուսումնական հաստատություններին ՀՀ կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում:

Բացի այդ, համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4.1 կետի պահանջների՝ բուհը իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուս-

ման վարձի մասնակի փոխհատուցում՝ վճարովի համակարգում սովորող մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոսի չափով: Տվյալ արտոնությունը տարածվում է նաև 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողների վրա:

Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ և արտոնություններ

1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի №145-Ն որոշման №3 հավելվածի 31-րդ կետի համաձայն՝ հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում մարտական հերթապահությունում ընդգրկված շարքային և կրտսեր ենթասպակայան կազմերի պայմանագրային զինծառայողների դրամական ապահովությանն ուղղված միջոցները չեն ներառվում նրանց ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ, որի համար զինծառայողի բնակության վայրն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) է ներկայացվում տեղեկանք՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2015թ. հոկտեմբերի 1-ի «Հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում մարտական հերթապահություն կատարելու վերաբերյալ պայմանագրային զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին տեղեկանք տրամադրելու պայմանները և տրամադրվող տեղեկանքի ձևը հաստատելու մասին» №1158 հրամանով սահմանված կարգով:

2. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2 հոդվածի համաձայն, սույն օրենքով սահմանված կարգով վճարված եկամտային հարկը վերադարձվում է ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ ՀՀ տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխա-

տողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆինանսական կազմակերպությունից 2014թ. նոյեմբերի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռք բերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով, բայց ոչ ավելի, քան՝ համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված եկամտային հարկի գումարը:

Եկամտային հարկի գումարի վերադարձման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի №205-Ն որոշմամբ:

3. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի 2-րդ կետի համաձայն՝ ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող անձինք՝

- սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող շենքերի և շինությունների և (կամ) փոխադրամիջոցների մասով,
- ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող սույն մասի 1-ին կետում նշված՝ գույքահարկով հարկվող օբյեկտի դեպքում հարկվող օբյեկտի իրենց բաժնի մասով,
- ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող սույն մասի 1-ին կետում նշված գույքահարկով հարկվող օբյեկտի մասով, եթե մյուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձինք են:

Վերը նշված 3 կետերին համապատասխան, պարտադիր ժամկետային ծառայության ժամկետի ավարտից հետո, գույքահարկից ազատվում են նաև ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում ծառայություն անցած՝ ռազմաուսումնական հաստատություններն ավարտած անձինք՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող մեկ շինության մասով, որի հարկման բազան չի գերազանցում 40.0 մլն դրամը (չգերազանցող մասով) և մեկ փոխադրամիջոցի մասով, որի հարկման բազան չի գերազանցում 150 ձիաուժը (չգերազանցող մասով):

4. «***Կենցաղային տեխնիկայի ձեռքբերմանն աջակցելու նպատակով*** ՀՀ առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի տրամադրման հատուկ վարկային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 23-ի №590-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ ՊՆ և ԱԱԾ կրտսեր և ավագ սպայական կազմի ու ՀՀ ոստիկանության միջին, ավագ և գլխավոր կոչումներ ունեցող ծառայողներին՝ տրամադրվում է առավելագույնը 1.000.000 դրամի, իսկ ՀՀ ՊՆ շարքային և ենթասպայական կազմի, ԱԱԾ ենթասպայական կազմի ու ոստիկանության կրտսեր կոչումներ ունեցող ծառայողներին՝ առավելագույնը 500.000 դրամի չափով սպառողական վարկեր:

Վարկերը տրամադրվում են առավելագույնը 7 տարի ժամկետով, 12 տոկոս տարեկան դրույքաչափով, որի 2 տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից: Ընտանիքում 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող վարկառուների համար պետությունը սուբսիդավորելու է տոկոսադրույքի 3 տոկոսը:

Սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու կարգը

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի №1691-Ն որոշման դրույթների՝ զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց և նրանց անմիջական ընտանիքի անդամների համար ընձեռված է հնարավորություն սոցիալական փաթեթի շրջանակներում օգտվելու հետևյալ ծառայություններից՝

1. հիպոթեկային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից՝ աշխատողը և նրա անմիջական ընտանիքի անդամը,
2. ուսման վճարից՝ աշխատողը և նրա անմիջական ընտանիքի անդամը,
3. ՀՀ–ում և ԼՂՀ-ում հանգստի ապահովման ծառայությունից՝ աշխատողը և նրա անմիջական ընտանիքի անդամը,
4. սոցփաթեթի շահառուի առողջության ապահովագրության լրացուցիչ ծառայությունների նվազագույն փաթեթի և (կամ) սոցփաթեթի շահառուի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության նվազագույն բազային փաթեթի ձեռքբերում՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի №1691-Ն որոշմամբ նախատեսված չափորոշիչներին համապատասխան:

Աշխատողի անմիջական ընտանիքի անդամներ են համարվում աշխատողի ամուսինը, մինչև 27 տարեկան զավակը (զավակները):

Սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել հետևյալ դեպքերում՝

1) աշխատողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու և սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, և նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել): Այս դեպքում սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու համար աշխատողը սոցփաթեթի հաշիվն սպասարկող բանկ է ներկայացնում իր կենսաթոշակի վկայականը, որի պատճենը պահվում է բանկում.

2) աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից՝ սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու ժամանակ, որի դեպքում ժառանգը սոցփաթեթի հաշիվն սպասարկող բանկ է ներկայացնում ժառանգության իրավունքի վկայագիր, որի պատճենը պահվում է բանկում.

3) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա, որպես կատարված սոցիալական վճարների փոխհատուցում, սոցիալական փաթեթի հաշվում ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա մնացորդը, բայց ոչ ավելի, քան նախորդ տարվա ընթացքում ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փոխանցված սոցիալական վճարների չափը: Այս դեպքում աշխատողը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո իր սոցիալական փաթեթի հաշվում առկա համապատասխան չափով դրամական միջոցները կանխիկացնելու համար բանկ է ներկայացնում դիմում նախորդ տարվա ընթացքում իր կողմից ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փաստացի մասնակիցների ռեեստր վարողին փոխանցված սոցիալական վճարների չափի մասին հարկային մարմնից տեղեկատվություն ստանալու մասին: Հարկային մարմնից համապատասխան տեղեկատվությունն ստանում է բանկը՝ առցանց եղանակով, հարկային մարմնի և բանկի միջև փոխհամաձայնեցված կարգով կատարված

հարցման միջոցով: Բանկը սույն հարցման պատասխանի հիման վրա աշխատողի՝ նախորդ տարիների ընթացքում կուտակված սոցիալական փաթեթի գումարները կանխիկ վճարում է աշխատողին, բայց ոչ ավելի, քան տեղեկանքում նշված՝ հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների չափը:

2018 թվականի հունվարի 1-ից սոցիալական փաթեթի ծառայություններից (այդ թվում առողջապահական փաթեթի ծառայությունները) օգտվելու պարտադիր նախապայման է հանդիսանում նույնականացման քարտի առկայությունը:

Զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների համար պետության կողմից իրականացվող բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման պայմաններն ըստ շահառուների

Շահառուներ	***Հիվանդանոցային բուժում (վիրաբուժական և թերապևտիկ)***	***Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայություններ***	***Դժվարամատչելի հետազոտություններ***
ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի №806-Ն որոշման համաձայն			
- զինծառայողներ և քաղաքացիական հատուկ ծառայողներ (ՔՀԾ)	***Ամբողջ ծավալով***	***Ամբողջ ծավալով***	***Ամբողջ ծավալով***
- զինծառայողների և ՔՀԾ ընտանիքների անդամներ	***Ամբողջ ծավալով***	***բուժման ծախսերի 50%-ի չափով***	***Ամբողջ ծավալով***
- զինթոշակառուներ, - զինհաշմանդամներ, - մարտական գործողություններ մաս-նակիցներ (ՄԳՄ), - ՄԳՄ ընտանիքների անդամներ, - զոհված զինծառայողների ընտանիքների անդամներ, - պարտադիր ժամկետային զինծառայողների ընտանիքների անդամներ	-	***բուժման ծախսերի 50%-ի չափով, բացառությամբ՝*** - ՄԳՄ ընտանիքների անդամներ, - զոհված զինծառայողների ընտանիքների անդամներ, պարտադիր ժամկետային զինծառայողների ընտանիքների անդամներ	***ԿՏ*** ***ՄՌՏ*** ***Կորոնարոգրաֆիա***
ՀՀ կառավարության 2004թ.-ի մարտի 4-ի №318-Ն որոշման համաձայն			
- զինթոշակառուներ, - զինհաշմանդամներ, - մարտական գործողությունների մասնակիցներ (ՄԳՄ), - ՄԳՄ ընտանիքների անդամներ, - զոհված զինծառայողների ընտանիքների անդամներ, - պարտադիր ժամկետային զինծառայողների ընտանիքների անդամներ	***Պետության մասնակցության չափով***		

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները.....4
Պետական մարմինների և գործատուների պարտավորությունները զինծառայողների սոցիալական ապահովության բնագավառում.....6
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են հետևյալ իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները 6
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության երաշխիքը.....7
Զինծառայողների աշխատանքային երաշխիքները 10
Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը.....10
Զինծառայողներին տրվող արձակուրդները 11
Զինծառայողի հանգստյան տներից օգտվելու իրավունքը 12
Զինծառայողների դրամական ապահովության երաշխիքը 13
Զինծառայողների պարենային և իրային ապահովությունը.....14
Ծառայությունից արձակման դրամական օգնություն 14
Պաշտոնային դրույքաչափի չափով միանվագ դրամական օգնություն.....15
Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում դրամական օգնություն 16
Չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցում.....17
Զինծառայողների բնակարանային ապահովությունը.....17
Վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում.....18

Բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն.....19
Ամենամյա պարգևավճարի իրավունք 19
Լրացուցիչ երաշխիքներ և արտոնություններ՝ ժամկետային զինծառայողների ու մարտական գործողությունների մասնակիցների համար.....22
Զինծառայողների տրանսպորտային սպասարկումը 23
Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը 24
Հատուցման գումարների չափերը և վճարման պայմանները.....25
Զինծառայողների պարտադիր պետական ապահովագրությունը.....27
Զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը.....28
Կոմունալ ծառայությունների դիմաց զեղչով վճարելու իրավունքը.....28
Զինծառայողների անվճար բժշկական սպասարկումը 29
Զինծառայողների անվճար առողջարանային բուժման իրավունքը 32
Զինծառայողների կրթություն ստանալու երաշխիքը 32
Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված արտոնություններ.....33
Սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու կարգը 35